



Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

ՀԵՆՐԻԿ ՍԱՐԿԱՎԱԳ

ՁԱՏԿԱԿԱՆ ՏՈՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ



Ետրվարի 25-ից (Բուն Բարեկենդան) սկսվեցին պահքի և ապաշխարության օրերը. փակվեցին Մայր Տաճարի վարագույրները, լռեցին ուրախալուր շարականները: Այդ օրվանից սկսած՝ Մայր Աթոռում կատարվում էր ամեն օր երեք անգամ ժամերգություն, լսվում էին ողբաձայն շարականներ, հարյուրավոր մարդիկ խոստովանում էին ու ապաշխարում:

Մաղկազարդի օրը եկեղեցին լի էր ժողովրդով: Նախապես պատրաստված և օրհնրված ուռենու դալար ճյուղերն ու ոստերը բաժանվեցին բոլորին, որոնցից եկեղեցին կանաչազարդվել և ստացել էր տոնական բնույթ: Այդ կանաչ ճյուղերով փրենց կուրծքերն էին զարդարում երիտասարդները, նույնիսկ մանուկներն ու ծերերը: Նույն օրը երեկոյան, Դոնբացքի ժամանակ, րոպեներն ավերի հուզիչ և սրտառու էին: Մերունազարդ Հայրապետը մասնակցում էր Դոնբացքին և իր ներկայությամբ առանձին շուր էր տալիս նրան: Նա կանգնած էր Իջման Սեղանից քիչ ներքև, դեպի արևմուտք, խաչն ու հայրապետական գավազանը ձեռքին, իսկ իր հետ՝ մյուս միաբանները: Մայր Աթոռի ավագ լուսարար տեղ Նիկողայոս ավագ քահանան ծոնկի եկած Իջման Սեղանի առջև՝ իր դյուրթի ձայնով երգում էր աղիողորմ՝ «Բա ց մեզ, Տէ՛ր, բա ց մեզ, Տէ՛ր, բա՛ց մեզ, Տէ՛ր, զդուռն ողորմութեան, որ ողբալով կարգամք առ քեզ» մաղթանքը, իսկ ներքուստ, վարագույրի ետևից, գերաշնորհ տեղ Սահակ սրբազանը (եպիս-

կոպոսական զգեստավորությամբ) բարձրաձայն պատասխանում՝ «Ձայն Արարչի Աստուծոյ գոչէ ասելով. Եկա՛ք օրհնեալք Հօր իմոյ. Ժառանգեցէ՛ք պատրաստեալ զարքայութիւնն ի սկզբանէ աշխարհի»: Բոլորը սրտատրոփ սպասում էին վարագույրների բացվելուն: Չորս սեղանների վարագույրները միաժամանակ դանդաղորեն բացվեցին և լսվեցին «Ձողորմութեան քո զդուռն բաց մեզ...» շարականի հնչյունները: Վերջում Վեհափառն ասաց «Պահպանի՛ր», օրհնեց և խաղաղություն մաղթեց իր հավատացյալ ժողովրդին ու հոգևորականների ուղեկցությամբ վերադարձավ Վեհարան:


Մոտեցան պահքի վերջին՝ Ավագ Շաբաթվա օրերը: Մայր Տաճարի զանգակները հնչում էին շատ խորհրդավոր և տխուր: Նրանց յուրաքանչյուր դողանքից կարծես մարդու հոգուց կտրվում էր մի լար: Ավագ երկուշաբթին (այդ օրը մատուցվեց պատարագ) և երեքշաբթին «Աւետումն Աստուածածնի» և «Յիշատակ տասն կուսանաց» օրերն էին: Հոծ բաղմունքյան ներկայությամբ կատարվեցին ժամերգությունները:

Ավագ հինգշաբթի օրը նորից փակվեցին վարագույրները, կատարվեց «Ընթերցաց կարգը և մատուցվեց պատարագ: Սարկավագը կարգաց Մարկոսի ավետարանի 26-րդ գլուխը, որից հետո վարագույրները բացվեցին և վերաբերողն ասաց «Հաւատամքը»: Այնուհետև գերաշնորհ Սահակ սրբազանը խաչն ու գավազանը վերցրած՝ բարձրացավ Ավագ Սեղանի վրա և բարձր ձայնով կարգաց բարոյի հորդորական թուղթը, նախ՝ ահացուցիչ, ապա հորդորական եղանակով՝

«Լուարո՛ւք, որդեա՛կք իմ, և ես զերկիւղ Տեառն ուսուցանեմ ձեզ աննախանձաբար, իբրև սիրելի և հարազատ որդւոց...»: Պատարագից հետո հաղորդվեցին Հոգևոր Ճեմարանի ուսանողները, ապա բոլորը, որոնք երկար ժամանակ պահել էին պաս և ծոմ:

Երեկոյան ժամը 10-ին կատարվեց «Ունալվալի կարգ»ը: Բոլոր անհրաժեշտ իրերը դրված էին Ավագ Սեղանի վրա: Միաբանները զգեստավորված բարձրացան այնտեղ և միասին երգեցին «Յողեա յիս մշտկաւ և սուրբ եղէց, լուա և քան զձիւն սպիտակ

Սուրբ խաչով և ավետարանով երեք անգամ տյառնագրվեցին և օրհնվեցին յուրը և ջուրը միասին: Սահակ սրբազանը վերցնելով իր վրայից շուրջաւոր՝ կապեց ղենջակը և սկսեց խոնարհաբար լվանալ, ըստ ավագության, միաբանների ոտքերը: Այս արարողությունները ի ցույց մարդկան և ձևականության համար շեն կատարվում, այլ ունեն իրենց խորը նշանակությունը: Նրանք հիշեցնում են արժանի հիշատակը Փրկչի, որը խորհրդավոր երեկոյան ընթրիքից առաջ լվաց իր հավատարիմների ցեխոտ և փո-



Ժամաւար Վահան արքեպիսկոպոսը մի խումբ միաբանների հետ, պատարագից հետո:

եղէց» ողբաձայն սաղմոսը: Սահակ սրբազանը (եպիսկոպոսական զգեստավորութեամբ) կարդաց «Փառաւորեմք զքեզ, Տէր մեր և Փրկիչ, Յիսուա Քրիստոս» աղոթքը, ապա ջուրը լցրեց կոնքի մեջ և ձայնով ասաց. «Ձայն Տեառն քի վերայ ջուրց և Աստուած փառաց որդւտաց» սաղմոսը: Առանձին աղոթք ասվեց յուրի վրա, որի մի մասը պետք է քսվեր լվացվելիք ոտքերի վրա, իսկ մյուսը՝ բաժանվեր հավատացյալներին:

շոտ ոտքերը, որպէս նշանակ սիրո և խոնարհության: Այս նշանակ է նաև ապաշխարութեան. ինչպէս նա լվաց իր աշակերտների ոտքերը, այնպէս էլ կարող է լվանալ մեր մեղքերը, հանցանքներն ու անիրավութիւնները, եթէ մենք կամենանք և ապաշխարենք. «Նա՛ որ երբեմն յուր աշակերտների ոտքերը լվաց՝ և որ միայն կարող է մեր մեղքերը լվանալ, սիրով հրապարակ է դալիս այսօր մեր ոտքերը լվանալու, եթէ միայն հոժա-



Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարը Հարություն կիրակին

րենք» (Գեորգ Եպիսկոպոս, ներկա Գեորգ Զ. Կաթողիկոս, «Քարոզագիրք», էջ 75)։

Բոլորի ոտքերը լվանալուց հետո, Սահակ սրբազանը կարդաց Հովհաննու ավետարանի հետևյալ հատվածը՝ «Եւ յորժամ լուաց զոտս նոցա, ա՛ռ զհանդերձսն իւր և դարձեալ բազմեցաւ, և ասէ ցնոսա. Գիտէ՞ք զինչ արարիդ ձեզ։ Դուք կոչէք զիս Վարդապետ և Տէր, և բարութք ասէք, քանզի եմ իսկ։ Իսկ արդ, եթէ ես լուացի զոտս ձեր, Տէրս և Վարդապետս, և դուք պարտիք զմիմեանց ոտս լուանալ։ Զի օրինակ մի ետու ձեզ, զի որպէս ես ձեզ արարի, և դուք առնիշիք» (Հովհ. ԺԳ 12—15)։

Ավագ ուրբաթ, «Օր շարշարանաց և խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի», գիրքերին, կատարվեց հսկում։ Ավագ և Իջման սեղանները ծածկված էին սև վարազույրով, որպես սգո նշան։ Ավագ Սեղանի վրա կարգով շարված վառվում էին տասներկու միատեսակ մոմեր, իսկ նրանց կենտրոնում՝ մի կերոն։ Ներքևում կարդացվում էին ավետարաններ և ասվում սաղմոսներ։ Յուրաքանչյուր ավետարանից հետո հանգցվում էր մեկական մոմ երկու կողմերից։ Կարդացված ավետարանները վերաբերում էին Քրիստոսի մատնությունը, շարշարանաց և իր աշակերտներին, որոնք ամենածանր և կրիտիկական մոմենտին լեքեցին նրան և փախան։ Առաջինը մոտեցավ զրախարհի Սահակ սրբազանը և կարդաց Հովհաննու ավետարանը աշակերտների ցրվելու և իրենց Տիրոջը մենակ թողնելու մասին՝ «Ահա եկեացէ ժամ և եկեալ իսկ է, զի ցրուեսցիք յիւրաքանչիւր տեղիս, և զիս միայն թողուցուք. և չեմ միայն, զի Հայր ընդ իս է» (Հովհ. ԺԶ 32)։ Վերջացնելուց հետո հանգցրին տասներկու մոմերից երկուսը։ Տասներկու մոմերը՝ տասներկու աշակերտների, իսկ կերոնը՝ Քրիստոսի խորհրդանշանն է։ Այսպես կարդացվեցին վեց ավետարաններ և իրար հետևից հանգցվեցին տասներկու մոմերը, ապա՝ եկեղեցին լուսավորող մյուս բոլոր լույսերը և մնաց լուկ Ավագ Սեղանի կերոնը։ Մութ խավարը պատեց ամենուրեք։ Հավատացյալների աչքերի առջևից կինո-ժապավենի նկարների պես իրար հետևից անցնում էին տխուր և դառն պատկերները «Ընթերցաց գիրքերի» որտեղից սկիզբ է առնում Հոգաբարձի մատնությունը, Գեթսեմանի պարտեզի՝ որտեղ Քրիստոսը մեկուսի, ծռակի եկած, աղոթքներ, էր առաքում Բարձրյալին և ասում՝ «Հայր, եթէ միմիս, անցո՛ղ զբաժակս զայս լինեն, բայց ոչ իմ կամք, այլ քոյդ լինին»

(Հովհ. ԻԲ 42), երբ նրա դեմքից, արյան կալակի պես, ոլուն-ոլուն գետին էին կալվում քրտինքի արող շիթերը, Կալիս-փա քահանայապետի տան՝ որտեղ հարցու-փորձ էին անում Քրիստոսին, այսպես, ծեծում, ծակում երեսը, փշե պսակ դնում զլիսին, տանջում, հայհուցում, Գողգոթա լեռան՝ որտեղ տանջում էին նրան և խաչափալտի վրա բեռնում։ Հավատացյալները հաղորդակից լինելով իրենց Փրկչի անուր շարժարաններին՝ դառն և անմոռն լաց էին լինում իրենց հոգու խորքերում։

Այնուհետև երգվեցին ողբաձայն սաղմոսներ, ապա հրեշտակների փառաբանությունը՝ «Փառք ի բարձունս», և լույսերը նորից վառվեցին։ Դնելով զրախարհի վրա սուրբ խաչն ու ավետարանը, հոգևորականները շուրջանակի կանգնեցին նրա շուրջը և երգեցին «Շաշի քո Քրիստոս, երկրպագանեմք, և զսուրբ մատնությունդ քո մեծացուցանեմք, և զսուրբ շարշարանդ քո փառաբանեմք» հոյակապ շարականը, որի թուվիչ հնչյունները լցնում էին մարդկանց սրտերը մեծ բերկրանքով։ Բուրվառով խնկարկում էր Սահակ սրբազանը։ Ժամը 10-ին կատարվեց թաղման կարգը։

Ավագ շաբաթ երեկոյան Զատիկի Ճրագալույցն էր, որի համար մատուցվեց հանդիսավոր պատարագ, ներկայությամբ Վեհափառի, Վահան արքեպիսկոպոսի և մյուսների։ Պատարագից առաջ բնակի վրա բարձրացավ Տիգրան նորընծա սարկավազը և կարդաց 'Իանիելի գիրքը՝ «Յամին ութուտաաներորդի նաբուգոդոնոսորայ արքայի...»։ Վերջացնելուց հետո քաջվեց վարազույրը, և նա բարձր ձայնով կարդաց ճաշու ժամամուտը՝ «Քրիստոս յարեալ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց, և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգեկեաց, նմա փառք յաւիտեանա, ամէն»։ Վերաբերողը նորընծա Պետիկ սարկավազն էր։ Կարդացվեցին և երգվեցին հարության վերաբերող ավետարաններ և շարականներ։ Պատարագից հետո եղաւ նախատոնակ։

Ապրիլի 13-ն է, մեծ Զատիկը։ Անցան ապաշխարություն տխուր ու մեղաճաղձոտ օրերը։ Փրկչի շարժարանների, խաչելություն և թաղման պատկերներին հաջորդում է նրա Հարությունը։ Ահա յուղաբեր կանայք գնում են իաչեցյալի գերեզմանը, — կարդում են այսօրվա ավետարաններում, — և հրեշտակն ավետում է նրանց Հիսուսի Հարություն մասին՝ «Մի՛ երկնշիք. զՅիսուս խնդրէք զնազուրեցի զխաչելեալն, յարեալ, չէ աստ»։ Որքան ուրախություն է պատճա-

ուել քրիստոնյաներին այս բարի ավետիսը և տվել նրանց ուժ և կորույն:

Մայր Աթոռ Փրկչի Հարություն տոնակատարության առթիվ այսօր անսահման ցընծություն և բերկրանքի մեջ է: Հազարավոր մարդիկ՝ դեմքներին կենսուրախ ժպիտներ, սրտերում ահր ու խնդություն, դիմում են դեպի եկեղեցի: Ներսում տեղ չլինելու պատճառով՝ նրանց երեք քառորդից ավելին դըրսում է: Այսօրվա շարականներն ուրախ են, վեհ և հաղթական: Ամենուրեք՝ թե՛ եկեղեցում և թե՛ դրսում՝ մարդիկ միմյանց ողջունում են ուրախ արտահայտությամբ՝ «Մեզ և ձեզ մեծ աւետիս, Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Այսօրվա ճոխ պատարագին ներկա եղավ ծերունի Հայրապետը: Պատարագիչն էր գերաշնորհ Սահակ սրբազանը, վերաբերողը՝ տեր խորեան ավագ քահանան: Պատարագից հետո հոգևորականների և շաթիրների ուղեկցությամբ Վեհափառը վերադառնում է Վեհաբան: Ժողովուրդը պատենջի պես կանգնել է նրա առաջ: Հերթով համբուրում են նրա Աջը, գավազանը, և՛ մանուկներ,

և՛ իրիտասարդներ, և՛ ծերեր: Այս նշանակ է այն բանի, թե եկեղեցասեր և ժողովրդասեր Հայրապետը որպիսի սեր և համակրություն է վայելում իր սիրեցյալ հոտի կողմից: Վեհաբանի առջև նա կանգ է առնում, օրհնում մի բույսում իր առջև ծովացած ժողովրդին, ասում «Պահպանիչ»ը, ապա հայացքը հառում դեպի վեր, խնդրում Բարձրյալից օրհնություն և խաղաղություն՝ «Տե՛ր, օրհնի՛ր իմ ժողովրդին և պահի՛ր ի խաղաղության»:

Սիրելի՛ հավատացյալք քի Քրիստոս, մեծ սիրով շնորհավորում եմ ձեզ Փրկչի Հարությունը և ցանկանում առավել ջերմեռանդություն ձեր թանկագին հավատքի մեջ: Այսուհետև է՛լ ավելի բորբոքվի ձեր սրտերում Հիսուսի կենսատու սերը և դառնա կենաց աղբյուր: Փրկչի պատվիրաններով և ձեր անսասան հավատքի կուռ վահանով զինված՝ փառապանծ հաղթություն նվաճեք աստանայական և աշխարհային պատրանքների նկատմամբ, պատրաստեք ձեզ երկնից արքայությունը մտնելու և վայելելու հավիտենական փառքը:

